ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՋՈՒՌԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻՍՏԻ/ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ/, ԴԱՍՏԻԱՐԱԿԻ, ՀՈԳԵԲԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	**Թափուր պաշտոնի անվանումը**	**Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)**	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝**	**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը**
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1. Մեթոդիստ (տնօրենի ուսումնական գծով տեղակալ) -0.25 դրույք /33.000 ՀՀ դրամ աշխատավարձ/ 2.Դաստիարակ -1,17 դրույք /154.440 ՀՀ դրամ աշխատավարձ/ 3. Հոգեբան.-0.5 դրույք /66000 ՀՀ դրամ աշխատավարձ/	1)**Որակավորման պահանջները** 1.Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը տնօրենի ուսումնական գծով տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։ 2. Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։ 3. Հաստատության հոգեբանի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն։ **2) Ընդհանրական պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի, ֆիզկուլտուրայի հրահանգչի , երաժշտության ղեկավարի , հոգեբանի պաշտոնները զբաղեցնող անձինք պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը	1) դիմում (Զև 1). 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ). 3) անձը հաստատող փաստաթուղթ. 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում). 5) ինքնակենսագրություն (Զև 4). 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի. 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ

		ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:	սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:	զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
		Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ այունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
2	**Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը**	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
	Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կրաշեն, Կրաշեն-Ջաջուռավան միջհամայնքային ճանապարհ, մանկապարտեզ 1 **Օրը՝** 2026 թվականի մարտի 17-ին ժամը՝ 11:00-ին:	Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կրաշեն, Կրաշեն-Ջաջուռավան միջհամայնքային ճանապարհ, մանկապարտեզ 1 **Հեռ. 093 40 75 90** **Էլ.հասցե՝** jajuravani.mankapartez@gmail.com **Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:** **Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝** https://escs.am/am/news/11978 :		**2026 թվականի փետրվարի-10-ից մինչև 2026 թվականի մարտի 10-ը ներառյալ:**
		Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից: **Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել** akhuryan.am **կայքում:**		